չիմացանք, թէ արդեօք Գամբետտա ամբողջ Ֆրանսիայի, թէ իր կողմից էր խօսում։ Առաջին դէպքում, մեր հայրենիքի քաղաքականութեան խաղաղասէր ոգու պատճառով կը հրաժարվէինք լսել Գամբետտայի ձայնը։ Ֆրանսիական Հանրապետութեան Նախագահի և մինիստր Ֆրէյսինէի արած յայտնութիւնները բաղդաւորապէս մեկնեցին մեզ, որ Գամբետտա իր ձայնով դիմեց Եւրոպային ոչ թէ Ֆրանսիայի, այլ անձնականապէս իր կողմից։ Որովհետև Գամբետտայի ձայնը յաղթութեան է վերաբերում, մենք կը սկսենք նրան քննել և այդ քննութիւնը կը կապենք «France» լրագրի օգոստոսի 16-ի յօդուածի հետ։ Ահա այդ յօդուածի սկիզբը։ «Պ. Գամբետտա իր գեղեցիկ ձայնով խօսեց իրաւունքի, արդարութեան և ապագայի մասին։ Այդ խօսքերը խաղաղասիրական յայտնութիւնների հետ խառնված կասկածոտ Գերմանիային բարեկամեան խառնակութիւն են ներկայանում։ Գերմանիան կուրութեան է ենթարկված, որ յատկանիշ է իր գանձերի վրա նստած ժլատին։ Հռենոսի այն կողմի լրագիրները կոմիկական երկիւղի են ենթարկված։ Մինչև այժմ մենք կարծում էինք, որ Ֆրանսիական Հանրապետութեան պետական մարդիկը, գնահատելով այն փաստը, որ ֆրանսիական ժողովուրդը պատերազմ չի ցանկանայ մինչև ստիպված չը լինի թշնամու յարձակմունքից, նրանց կողմից աւելի խաղաղ ճանապարհներով կընթանային, քան թէ բուրբօնները և բօնապարտները. մանաւանդ պ. Գամբետտա, որ խաղաղասէրի, մինչև անգամ խաղաղութիւն խօստացողի անուն է ստացել։ Իսկ եթէ նրա ձայնը ցոյց է տալիս, որ նա հրաժարվել է իր այդ դերից և փոխել է իր ընթացքը, այդ հանգամանքը Գերմանիայի մէջ ոչ թէ երկիւղ, այլ զարմանք և ափսոսանք յարուցեց։ Այնուամենայնիւ Գերմանիայի քաղաքականութիւնը այսու հետև նոյնքան խաղաղասէր կը լինի, որքան և առաջ, բայց Գամբետտայի ձայնը ծանր հարուած տուեց խաղաղութեան հաւատին, որ թէ Ֆրանսիայի և թէ Գերմանիայի մէջ տնտեսութեան առաջադիմութեան հիմունք է կազմում։ Թէպէտ այդ հանգամանքի պատճառով, մեր կարծիքով, դժուարութիւններ չեն ծագի. բայց դա ապացուցանում է, որ պատերազմական կուսակցութիւնը նոյնքան շատ հանրապետական նշանաւոր անդամներ ունի, որքան և միապետական և չափազանց զարմանալի է, որ պատերազմական կուսակցութեանը պատկանում է այնպիսի մեծ ազդեցութիւն ունեցող պետական մարդը, ինչպէս պ. Գամբետտա։ Արդեօք իրաւունք ունի՞ պ. Գամբետտա հիմնվել արդարութեան վրա։ Այստեղ կը յիշեցնենք, որ Նիմվեգենի և Րէյսվիկի խաղաղական դաշնագրերը կապելու ժամանակ գերմանացիները նոյնքան վրդովված էին այն ժամանակ, որքան այժմ ֆրանսիացիները։ Այդ վրդովմունքը անցեալ դարի ընթացքում աւելի էլ սաստկացաւ ֆրանսիական նուաճողների կողոպտումների պատճառով։ Գերմանական ժողովուրդը այն ժամանակ ոչ թէ միայն իզուր էր սպասում վրէժխնդրական արդարութեանը, այլ առաջվայ բռնութիւնները երկրորդական տեղ ստացան Նապօլէոն I-ի նուաճումներով, որ ընդարձակեց Ֆրանսիան մինչև Լիւբեկ։ Իր անփոփոխ արդարութեան անունով պ. Գամբետտան կարող էր Էլբայի բերանը և Լիւբեկը պահանջել, ինչպէս նա այժմ Էլզաս-Լօտարինգիան պահանջում է։ Եթէ հանրապետական Ֆրանսիան, Գամբետտայից առաջնորդված, պատրաստ է այն քաղաքական աւանդութիւններին հետևել, որին հետևում էր միապետական Ֆրանսիան Լիւդովիկ XIV և XV և Նապօլէոն I-ի և III-ի ժամանակ, ուրեմն տարաբաղդաբար մենք պէտք է հաշտվինք այն մտքի հետ, որ արևմեան սահմանների վրա խաղաղութիւնը ապահով չէ։

Երկու ազգութիւնների խաղաղասէր մեծամասնութիւնը պէտք է իմանայ, թէ ամենքի համար ցանկալի խաղաղութեանը ո՞վ է սպառնում։ Գերմանիան իր ազգային քաղաքականութեամբ անդադար կապացուցանէ, թէ ինքը խաղաղութիւն է ցանկանում և ատում է պատերազմը։ Մենք ուրախութեամբ կարող ենք յայտնել, որ տասը տարիների ընթացքում, այն ժամանակվանից, երբ գերմանական ազգային միութիւնը կայացաւ, մեր խաղաղասէր քաղաքականութիւնը աջող էր, որովհետև այժմ այլ ևս ոչ ոք չէ հաւատում այն բամբասանքներին, իբր թէ Ֆրանսիայի նման Գերմանիան նուաճող դիտաւորութիւններ ունի։ Մենք ցաւում ենք, որ ինչպէս երեք հարիւր տարի առաջ, նոյնպէս և այժմ մեր դրացիների մէջ տիրապետող պատերազմական ոգին ստիպում է մեզ մեր ապահովութիւնը ուժեղ և պատերազմի համար պատրաստ զօրքերը համարել։ Դրանից մեծ ապահովութիւն մենք չենք փնտռում և հաւատացած ենք, որ այդ ապահովութիւնը անպատճառ ձեռք կը բերենք։

«Голосъ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

«Голосъ» լրագրի մէջ Էրզրումից տպված է մի թղթակցութիւն, որի մէջ 'ի միջի այլոց ասված է հետևեալը։

Կ. Պօլիս լինելով, ես լսեցի անհամակրական կարծիքներ Էրզրումի ռուսաց հիւպատոսի մասին։ Դրա պատճառները ինձ անյայտ էին այն ժամանակ, անյայտ են և այժմ։ Այնուամենայնիւ հարկաւոր եմ համարում առաջ բերել այն բոլորը, ինչ որ խօսում են այստեղ ռուսաց հիւպատոսի մասին։

Ամենից առաջ ասում են, որ ռուսական հիւպատոսը անգլիական, ֆրանսիական և մինչև անգամ պարսկական հիւպատոսների վարմունքի հակառակ, բոլորովին չէ զբաղվում քաղաքականութեամբ։ Նա զբաղվում է միայն ռուսահպատակներին անցագրեր տալով և վերանորոգելով, և բոլորովին չէ դուրս գալիս այն շրջանից, որ վերաբերվում է առևտրական շահերին։ Իսկ եթէ ստիպված է լինում մի բանի մէջ խառնվել, նա շատ օտարոտի կերպով է վարվում։ Օրինակ, անցեալ տարի, երբ մի պարսիկ բռնաբարեց հայ օրիորդի և այդ պատճառով հայերի և պարսիկների մէջ արիւնահեղ կռիւ պատահեց, ռուսաց գլխաւոր հիւպատոսը կողմնապահ գտնվեցաւ դէպի պարսիկները, որոնք հրաժարվեցան հայերին բաւականութիւն տալ։ Մի ուրիշ անգամ երբ մի հին գերեզմանատան հարցի պատճառով յոյները և հայերը դիմեցին ռուսաց հիւպատոսի միջնորդութեանը, նա այնպիսի սահմանագիծ անցկացրեց, որ մինչև անգամ թիւրքաց փաշութիւնը բողոքեց դրա դէմ։ Վերջապէս երբ երկրի մէջ սով սկսվեցաւ, երեք պետութիւնների ներկայացուցիչները օգնում էին ազգաբնակութեանը թէ քաջալերող խօսքերով և թէ օգնութիւն խնդրելով իրանց կառավարութիւններից։ Ռուսաց հիւպատոսը բնակիչներից ոչ մէկին մի մխիթարական խօսք անգամ չասաց։ Այդպիսի անբաւականութիւնների առիթների մասին այստեղ (Էրզրումի մէջ) ես շատ եմ լսել և նրանց անուշադիր չեմ կարող թողնել։ Պէտք է յուսալ, որ այդպիսի իրողութիւններ այլ ևս չեն կրկնվի։

—Ռուսաց գլխաւոր հիւպատոսը, ասաց ինձ հայերի հովիւ Օրմանեան եպիսկոպոսը, դեռ ինձ մօտ չէ եկել, բայց ես յոյս ունեմ, որ նրան իմ տանը շուտ կը տեսնեմ։ Ես մտադիր եմ նրա հետ բացարձակ խօսել։ Իմ Նախորդի ժամանակ հաստատված գործերի դրութիւնը և փոխադարձ յարաբերութիւնները այլ ևս չեն կարող շարունակվել։ Ես ցանկանում եմ, որ ռուսաց հիւպատոսը Էրզրումի մէջ ոչ թէ անտարբեր հիւր լինի, այլ օտար պետութիւնների ներկայացուցիչներից ամենագործունեան։ Ուրիշ կերպ չի էլ կարող լինել, որովհետև հայերի շահերը ամենից շատ ռուսական շահերին են շօշափում։ Ռուսաստանը տուեց մեզ Բերլինի դաշնագրի 61-դ յօդուածը. Ռուսաստանի ներկայացուցիչը այդ պատճառով պէտք է ամենամեծ ժողովրդականութիւն ունենայ հայկական նահանգների գլխաւոր կենտրոնի մէջ, մինչդեռ Նախկին սխալների պատճառով մի ուրիշն է ստացել առաջին տեղը ժողովրդական համակրութեան կողմից և ամբոխի վրա ունեցած ազդեցութեամբ։ Ես ցաւում եմ դրա մասին և ցանկանում եմ, որ ռուսաց հիւպատոսը բոլորովին այլ յարաբերութիւններ ունենայ իմ հայրենակիցների հետ։

Էրզրումի վիլայէթի Նոր առաջնորդը չափազանց նշանաւոր անձնաւորութիւն է։ Նա իր ուսումը վերջացրել է իտալական համալսարաններից մէկի մէջ և երկու բաժիններից գիտական աստիճաններ է ստացել։ Նա իրաւաբանութեան և աստուածաբանութեան դոկտոր է։ Կաթօլիկ ծնվելով, նա միշտ եռանդոտ և Հայաստանի վերածագման մասին երազող ազգասէր է եղել։ Ցանկանալով աւելի գործնականապէս մասնակցել իր ազգային գործին, ուսումը վերջացնելուց յետոյ նա վարդապետական կոչում ընդունեց և երեւելի Անտօնելլի կարդինալի հրաւիրմամբ սկսեց այս վերջինի մասնաւոր քարտուղարի պաշտօնը վարել։ Դրանով նա կամենում էր ազդել Հայաստանի մէջ բնակվող իր եղբայրների վրա, որտեղ կաթօլիկ կրօնի հետևողները հարիւր հազարներով կան։ Բայց այդ ձգտմանը վիճակված չէր աջողվել. պապական անսխալականութիւնը յայտնելուց յետոյ, Օրմանեան յուսահատված վարդապետը ոչ թէ միայն չը կամեցաւ սիլլաբուսի պաշտպանը հանդիսանալ, այլ առաջնորդ դարձաւ այն հայ-կաթօլիկների, որոնք մերժեցին պապի այդ շրջաբերականը։ Դրանից յետոյ հայ-կաթօլիկների մէջ սարսափելի կռիւ սկսվեց, որ վերջացաւ ապստամբ հայերի յաղթութեամբ, որովհետև թիւրքաց կառավարութիւնը նրանց պաշտօնապէս իրաւունք տուեց Թիւրքիայի մէջ եղած հայ-կաթօլիքական եկեղեցական կալուածները տնօրինելու համար։ Հռօմէական կուրիայի և ֆրանսիական դեսպան պ. Ֆուրնիէի ջանքերով Կ. Պօլսի մէջ անցեալ տարի կատարված յանկարծակի փոփոխութիւնների պատճառով հայ-կաթօլիկների գլուխն անցաւ պապական անսխալականութեան ամենահաւատարիմ արբանեակ քաղդէացի Հասունը։ Այդ փոփոխութիւնը վերջնականապէս ոչնչացրեց բազմաթիւ հայ-կաթօլիկների և պապական գահի մէջ եղած կապը։ Մի քանի հազար հայ-կաթօլիկ տնուանի ընտանիքները, իրանց սիրելի Օրմանեան վարդապետի յորդորներից դրդված, անցան հայ-լուսաւորչական եկեղեցու գիրկը, իսկ ինքը Օրմանեանը առաջինը ընդունեց հայերից պաշտած Ներսէս պատրիարքի օրհնութիւնը։ Օրմանեանի ծառայութիւնները գնահատելու համար Ներսէս պատրիարքը նրան Հայաստանի առաջին վիճակի առաջնորդի տեղը յանձնեց։

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ թղթակցութիւնը Աթէնքից։

Իմ նամակներից մէկի մէջ ես հաղորդել էի, որ ժողովուրդը մեծ ուրախութեամբ ընդունեց զօրքերի կազմակերպելու մասին տուած հրամանը։ Յունաստանի ամեն կողմերից ստացված լուրերից երևում է, որ ժողովրդի եռանդը չէ սառել և որ նա բոլոր ուժերով աշխատում է որքան կարելի է շուտ կազմակերպել իր զօրքերը։ Յուլիսի սկզբին յունական զօրքերի թիւը հասնում էր 10,000-ի, իսկ օգոստոսի առաջին օրերում այդ թիւը 20,000 հասաւ։ Օգոստոսի վերջին երևի նա 40,000 կը հասնի։ Զօրքերի թւի այդպիսի արագ մեծանալը մեկնվում է այն պատրաստականութեամբ, որով զինուորական ծառայութեանը ենթարկված երիտասարդները շտապում են զինուոր գրվել։ Երիտասարդներից շատերը, որոնք 21 տարեկան հասակի չեն հասել, նրանց թւում և առևտրական մինիստրի որդին, շտապում են կամաւորներ գրվել։ Ամեն օր միջին թւով 500 զինուոր են ընդունում։ Կառավարութիւնը պատուիրեց 16 հատ կրուպի թնդանօթներ պատրաստել, որոնք սեպտեմբերի 28-ին պատրաստ պէտք է լինեն։ Ներքին գործերի մինիստրը հրամայել է անցագրեր չը տալ այն մարդկերանց, որոնք զինուորական ծառայութեան են ենթարկված, իսկ շոգենաւերի վարչութիւններին հրամայված է անցագիր չունեցողներին Յունաստանից չը դուրս տանել արտասահման։

Յունաստանի պատերազմական պատրաստութիւններից երևում է, որ յունական կառավարութիւնը վճռել է թոյլ չը տալ Թիւրքիային, որ նա ծաղրի Եւրոպայի վճիռը։ Էլլադայի մէջ լաւ իմանում են, թէ ինչ նշանակութիւն ունեն Թիւրքիայի պատերազմական պատրաստութիւնները։ Թիւրքասէր թղթակիցների տարածած լուրերը թիւրքաց զօրքերի կենտրոնացնելու մասին չեն կարող փախցնել յոյն ժողովուրդին, որ շատ լաւ ծանօթ է թիւրքի քաջութեան հետ և թղթակիցներից լաւ կարող է գնահատել իր սեփական ուժերը։ Եթէ Թիւրքիան չէ հասկանում, որ նա չը պէտք է ընդդիմանայ Բերլինի կօնֆերենցիայի վճռին, նրա փոխարէն յոյները շատ լաւ հասկանում են, որ այժմ ամենայարմար րոպէն է պատերազմ յայտնելու համար Թիւրքիային, որ վերջին ռուս-թիւրքական կռւից յետոյ ամենաողորմելի դրութեան մէջ է։ Այդ կարծիքի են բոլոր յոյները և այդ հանգամանքը ազգաբնակութեան մէջ պահպանում է պատերազմական ոգին։

Թէսսալիայից ստացված են հետևեալ տեղեկութիւնները։ Թիւրքիան պատրաստվում է պատերազմի համար։ Բոլոր ամրոցները պաշարներով լցվում են։ Ագրաֆի լեռների բարձրավանդակների վրա կերոսինով թրջված չոր փայտեր են դարսված, որպէս զի հարկաւոր դէպքում նրանց կրակ տրվի, պատերազմի նշան տալու համար։ Այստեղի գանձարանների մէջ փող չը կայ։ Օֆիցերները ռոճիկ չը ստանալով պատռված հագուստներ ունեն և օրերով քաղցած են մնում։ Թէ զինուորները և թէ օֆիցերները տրամադրված չեն պատերազմելու, թէպէտ նրանցից մի քանիսը ասում են, որ եթէ պատերազմը լինի նրանք կամ կը սպանվեն և այդպիսով կազատվեն այժմեան թշուառ վիճակից, կամ կը յաղթեն և կողոպտելով Յունաստանը, իրանց հայրենիքը հարուստ կը վերադառնան։ Կապալառուները զօրքերին պաշարներ չեն հասցնում։ Զինուորները գիւղերի բնակիչներից խլում են նրանց ուտեստները։ Առևտուրը Թէսսալիայում ընկած դրութեան մէջ է։ Բացի այդ երկրի մէջ անասունների հիւանդութիւն է տարածված։ Մի ամիս սրանից առաջ Լարիսայի մահմեդական բնակիչները համաձայնել էին մի գիշերվայ մէջ կոտորել քաղաքի բոլոր քրիստոնեաներին։ Բաղդաւորապէս մարդասէր մուֆտին նրանց այդ բանը թոյլ չէր տուել։ Եթէ յունական զօրքերը չը շտապեն գրաւել Թէսսալիա, այստեղ կարող են սարսափելի անցքեր պատահել։

«Standard» լրագրին Աթէնքից գրում են։ Յունական զինուորական մինիստրը ընդունել է իր մօտ 35-ի չափ թիւրք օֆիցերների, որոնք եկել էին նրանից պարապմունք խնդրելու համար։ Դրանք թիւրքաց կայսրութեան զանազան տեղերից են։ Շատերը յունական սահմանների վրա են թափառում։ Այդ ողորմելիները ոչ թէ դաւաճանել են իրանց դրօշակին, այլ միջոցներ չեն ունեցել ապրելու համար։ Զինուորական վարչութիւնը հաւատացած է, որ թիւրքաց շատ զինուորներ և օֆիցերներ յոյների կողմը կանցնեն։ Ալբանացի հայրենասէրները նոյնպէս առաջարկում են իրանց ծառայութիւնները։ Յունաստանը կարող է կառավարել թիւրք զինուորականներին և եթէ նա այդ բանը չանի, կը նշանակի աւելորդ է համարում։ Եթէ հաւատանք փախստական թիւրք օֆիցերներին, նրանց բոլոր ընկերներն էլ մտադիր են նոյն բանն անել, եթէ յունական կառավարութիւնը կը համաձայնի ապահովել նրանց ռոճիկը և աստիճանը։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ